



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՏՕԲԹ. Կ. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ ԻԱՆ

Վ Ի Պ Ա Կ Ա Ն Լ Ա Ի Ա Բ Ա Ծ Ո Յ

**ՎԱՐԺԱՊԵՏԻՆ
ՊՂԱՏՈՆԱԿԱՆ ՍԷՐԸ**

Վ Ի Պ Ա Կ IV

Գ Ի Ն Ն I

1 ՂՐՈՒՇ ՈՂՋ
10 ԿՈՊԷԿ
25 ՍԱՆԹԻՄ

1906

ԱՆ ԿԱՄՊԷԹԱ
• ՓԱՇԱՅԵԱՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ
(ԵԳԻՊՏՈՍ)

891.99

ԿՐ - 22

39. 758

11-1

ՏՕԲԹ. Կ. ՓՆՇԱՅԵԱՆ

53

NOV 2011

892.33

47-29
ԱԿ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

ՄԵ ԳԱԻԱՌԱԿԱՆ ՎԵՊ

ԸՆԴՈՐՁՈՒ

ԳՊՐՈՅԱԿԱՆ ԱՌՈՂՁԱՊԱՀՈՒԹԻՒՆ

120 Պատկերներով

(ԼՔ 679)

ԳԻՆՆ Է 15 ՖՐԱՆՔ

1001
4365

Հեղինակաւոր անձերու և Մամուլին վկայութեամբ իր տեսակին մէջ մեր մէջ հրատարակած մէկ հատիկ կարևոր գործն է այս :

Ուսուցիչները, ծնողները և առհասարակ երախաներու կրթութեամբ և դաստիարակութեամբ հետաքրքրուող և անոնց առողջութեան մասին հոգածու գտնուող ամեն անհատ, պարտաւոր են օրինակ մը ունենալ այս գրքէն իրենց գրադարանին մէջ :

Մի՛ ըսէք թէ կարդայիք օգտակար զրքեր լռելիք :

ԿԱՐԴԱՑԷՔ

ԸՆԳԱԲԶԱԿ ԳՊՐՈՅԱԿԱՆ
ԱՌՈՂՁԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ


ԱՊԱԳԱՅԻՆ ՊԻՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԻՒՆ

Մեր Գիւղացիներուն Առողջապահութիւնը :
Գիտական Հտարածոյ :
Բժշկութիւնը Պարսկաստանում Յրանսերէն :

Մեծարգոյ Տօբտօր Փաշայեան, մեր ազնիւ բարեկամն, որ արդէն ծանօթ է զրատէր ազգայնոց իր լուրջ և հայրենաշունչ յօդուածներով, ուղարկած է մեզի ի հրատարակութիւն մի վէպ՝ իր ՅԵՇԱՏԱԿԱՐՆԷ քաղուած :

Յօժարաւիրոյթ կ'հրատարակենք այդ Վէպն, որու ամենէ ուշագրաւ մասն է Բալուայ վիճակին տեղագրութիւնն ու ժողովրդեան բարոց ու սովորութեանց նկարագիրը : Թէև Տօբտօր Փաշայեան իր արհեստին բերմամբ բազմազբաղ, գովանի ուսումնասիրութեամբ կ'յաջողի ժամանակ գտնել, դիտել ու նկարագրել պտըտած հայրենի վայրերուն հանգամանքն և մշակել զրակամտութեան ճիւղ մ'որ հայացի դրոշմն ունի :

Վստահ ենք, որ մեր ընթերցողներն հաճութեամբ պիտի կարդան սոյն վէպն որ մաս առ մաս պիտի հրատարակուի :



«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒ»

(1890 Փետրվար)

ՀԱՅ ԿՈՄ. 201

ՀԱՅ ԿՈՄ. 201

ՀԱՅ ԿՈՄ. 201

ՀԱՅ ԿՈՄ. 201

ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ՊՂԱՏՈՆԱԿԱՆ ՍԵՐԸ

ՅԱԿՈԲ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԱՍ.

Դնթերցողները պահ մը պիտի առաջնորդւին Քալուշ, ուր տեղի ունեցած վիպական ամուսնութեան մը բոլոր պատկերները թատերական ներկայացման մը նման յտակ աչքի առջև ունենան:

Երեակայեցէք Եփրատը իր ակնահաճոյ և փրփրեալ վիճակին մէջ. անոր երեք կողմը կանգնեցունցէք բարձրագիւր սեպացեալ ժայրեր, բաց մնացած հիւսիսային կողմն ալ դրէք Ս. Մեսրոպի անւանի ու հինաւորց հսկայ բերդը, ասոնց մէջ տեղը՝ ճիշդ Եփրատի ափերուն մօտ՝ խորթուրորդ ցած ժայրերու վրայ զետեղեցէք չորս հազար տան. այն աստեղ պիտի կրնաք պարզ գաղտնար մը կազմել Քալուշի դիրքին նկատմամբ: Եթէ կողէք ասոնց վրայ աւելցուցէք Եփրատի միւս ափերուն վրայ՝ հազարաւոր պարտէզներ, սրողարեր ծառերով և գոյնզգոյն ծաղկներով պճնւած, որոնց շուրջը երկու ժամն հազիւ կրնաք շրջան ընել:

Ամառայ եղանակին մէջ Քալուշի օդը խիստ

դժնդակ է: Արեգական կիզիչ ճառարայթներ հարկաւրամասնեայ ջերմաչափի աստիճանները մինչև 40 կը բարձրացնեն. ասոր վրայ աւելցուցէք ժայռերէ ցուացած ու անդրադարձած տաքը, այնատեն կ'ստիպուիք թռքերու պաշտօնը կրկնապատկել և շնչահեղձ վիճակի մը հասնել, այ՛քան խեղդիչ ու ճնշիչ է օդը: Արդ, այդ դժուարեան միտուարտէն մարդս բնականաբար կ'ուզէ իւր սալ և հանդիլ զովացուցիչ և հողմալից պարտէզներու մէջ, ծառերու սուերահաս վանիններու աակ:

ժողովուրդը ամառուայ եղանակին մէջ ինքզինքը զովահարելու համար կը դիմէ պարտէզները: Բալուխ թուրք բնակիչները, կամ աւելի ճիշդ է ըսել բուրգ բնակիչները, իրենց պարտէզները ու ամառանոցները քաղաքին հանդէպ՝ Արաճաւիի տիերուն վրայ շինած են, ամառան եօթը ամիսները իրենց սնով ու տեղով հոն կը փոխադրուին և կը վայելեն դրախտային հաճոյք մը: Իսկ հայերը ունին միւսին այգեստաններ, դուռուրէք պարտէզներ, քաղաքէն կէս կամ մէկ ժամ հեռու, բարձր գաշտադիրքի մը վրայ, այնպէս որ Բալուխ խորվիրապէն եթէ քան վայրկեան վեր ելլես, ընդարձակ Բալուահովիտը կը պարզի աչքիդ առջև, որուն քաղաքին կից եզերքը շինած են հայոց այգիները. այգեստաններու մէջ այստեղ այնտեղ կը նշմարին խրճիթածև շէքեր, ասանք Բալուի հայերու ամառանոցներն են, ասանք բաղդատմամբ թուրք բնակիչներու ամառանոցներուն, պարզապէս վրաններ են. սակայն այսու հանդերձ, այս վայրերու մէջ հայերը թուրքերէ աւելի կը զւարճանան, քանի որ այր թէ կին Բազգոսի յաջողակ խնկարկուներ են:

Պատահութիւնը ունեցայ մի բանի անդամներ ներկայ գտնուիլ այլևստանի խորսիճաններուն, մի օր ապաքինած հիւանդի մը կողմէ հրաւիրւած ըլլալով: Պաթակն ու թմբուկը, օղին ու խաղողը շրջապատւած էին այրերու և կիներու խմբակով մը. գաւաթները արդէն սկսած էին ձեռքէ ձեռք ման գալ, ջուր թակահարը իր կշտ ձայնը հաղիւ արձակած, գլուխնին օղիով տաքցած հայ կիները սկսան իրենց քաղցրայոյզ ձայնով խեղդել ջուր թակահարին խոստ ձայնը. այսպէս մէկ ժամ շարունակելէ վերջը տեսարանը փոխեցուց, երգին յաջորդեց ճիւղական պտրք. ճիւղական անուանցի պարը, որովհետև արքած կիներու շարժումներուն ու վարմունքին տպաւորութիւնը սրել կերպ շէր կարելի ներգործել իմ սրտի զգացման թելերուն, և այսօր երբ կը բանամ՝ յիշատակաբանս, ակամայ այս բտրք գլուած կը գանձմ:

Վերջապէս եօթը ժամ անընդհատ շարունակելէ վերջը, հաղիւ մտաբերեցին թէ՛ ժամանակ է արդ ձաշելու... ևս ի հարկէ բանի ու ակամայ հանդիսատես կըլլայի այս քեթիկ, քանի որ բոլորովին հակառակ էր իմ զգացումներուս. սեզանք բազմեցան ձեր կին մը, երկու փոքր տղաներ և ես, միւսները իրենց ստաժորաները բեռնաւորած էին օղիի և խաղողի ահագին պաշարով...:

Ընթերցողները անշուշտ կը ներեն մեր պատմութեան մէջ այս կարգի միջանկեալ գէպեր յիշել. ասանք մեծ կեանքի մը մանրանկարները ըլլալով ունին իրենց օգուտները:

Ինչպէս յիշեցինք, Բալուի ամառուայ եղանակը անտանելի է, բնակիչներու մեծ ուղոյն մասը ունին իրենց

սփոփիչ ու հեշտալի պարտէզներն ու այգիներ. ես որ պանդուխտ մըն էի, բնականաբար զուրկ էի այդպիսի առանձնաշնորհումներէ. ուրեմն զգալի էր պէտքը դռնէլու ինձ համար զով և օգուէա վայր մը, ուր կարելի ըլլար անցունել հանգիստ օրեր: Մերթ ընդ մերթ թէև կը հրաւիրէի թրքերու պարտէզներն և հայոց այգիները, սակայն ասոնք տևական չէին կըրնար ըլլալ. հարկը կ'ստիպէր որ ինձ համար ալ ընտրէի մասնաւոր ամառանոց մը. իբրև քաղաքին պաշտօնական բժիշկը կը յարգէի ամենուն կողմէ, որով ինձ համար օգտիտութեան վայր ընտրած էի քաղաքին մօտը գտնուած սրպէս զուտ հայաբնակ գիւղերը, Սարսար, Նըպրոյի, Խօյնար և Հաշաւ. այս գիւղեր և ուրիներ կը գտնին Բալուշանովիտ կոչուած գեղատեսիլ ընդարձակ դաշտին վրայ, որուն երկայնութիւնը ձիով կը տեսնուի ժամ և լայնութիւնը մինչև մէկ ժամ. ասոնց մէջ աւելի շատ յաճախած գիւղս էր անմահն Օտեանի ծնունդ տուող վայրը՝ Հաշաւ գիւղը, որուն վրայ ունէի մասնաւոր սէր մը, երբ գաշտն կ'եղնէի, սուքերս ակամայ այդ գիւղը կ'ուղղէին, կարծես թագուն զօրութիւն մը զիս հան կը ձգէր. կրնամ ըսել թէ այս ձգողական ոյժը ամեն այցելուի համար կրնայ պատահիլ, քանի ու Հաշաւ իր նման գիւղերու մէջ ունի կուտական գեղեցկութիւն մը և հոգաւոր Քաղցրասնայեաց Ս. Աստուածածին վանքի վսեմագոյն շուքը:

Ճիշդ այստեղ Օտեանի նման բանաստեղծի մը գրիչը պէտք է նկարագրելու համար Հաւաւի գրախտային գեղեցկութիւնը, զով ու քաղցրահամ շուքը, կ'ենաստու և առողջաւետ օգը, կայլն: Բժշկի մը

գրական գրիչն որչափ ալ ճգնի, դարձեալ չէ կարող հաւատարիմ թարգման հանգիստնալ անոնց նկարագրութեանը մէջ, բան մը պիտի պակսի, ճիշդ գիւղին բնական բանաստեղծութիւնն է այն. թէև արհեստական բառերու ստեղծման հարկ չը կայ, սակայն գիւղը ինքնին լոկ գեղակերտ մը ըլլալով՝ բանաստեղծի գրչի ու նկարչի վրձինին անհրաժեշտ պէտք ունի, ապա թէ՛ ոչ Հաւաւի գեղեցկութիւնը կը ծածկի իր կուտական քողին տակ:

Այս գիւղի նկարագրութեանը համար պիտի գիմեմ ընթերցողներու բանաստեղծական երևակայութեանը, որպէս զի գրչիս թերին ծածկեմ անոնց բանահիւստական ներշնչումներուն տակ: Ուրեմն, սիրեցեալ ընթերցող, երևակայէ Բալուշանովիտ արևմըտեան կողքին վրայ 230 զուտ Հոյ տուն, ամեն տուն իւր գեղատեսիլ պարտէզներով և քաղցրակարկաչ առուններով, չըջապատուած զմայլելի կանաչ մարգագետիններով և հողեգրու ցորենազարդ գաշտերով: Գիւղին եզերքը մի քիչ հեռուն երևակայէ Բալուի անապակ զինին արտադրող այգիները, որոնց մէջ օրերով պտտիս չես յագեհար. քաղէ՛ հասունցած ողկոյնները և ճաշակէ, տես թէ ո՛րչափ քաղցր ու ախորժելի են, հապա իրենց այստեղ այնտեղ փուլած գալարագեղ տերևներու հողեզմայլ տեսքը: Ե՛լ անկէ, մտի՛ր պարտէզները, մի՛ շարիր, նստէ՛ առուն եզերքը ու ծառին շուքին տակ, գիտէ՛ անոր հեղասահ ընթացքը: Այն պիտի տողէ ծաղիկներու արմատները, որոնց պղպաւոր քաղցրաբոյր թոյրէն պիտի գրաւի սխալը...: Պօլտոյ բանաստեղծներու երևակայական սխալը չէ այն, այլ իսկական այն գեղեցկաձայն

Թաշանը, որոնք լեզուս չունին, հատկապես զիջանցիկ կոչանքը և անդամարդիկ, որոնք հեղուկ անոր լեզուս կազմած է պարզ միասնիկ բառէ մը, այն է Սիւ... : Քաղէ անուշ պատգմները անոնք, խնձորը, սրարկոյիլը, դեղձն ու թուօթը, դրամատոյիս է կարծես անոնց համե ու հարբ : Իսկ ինչպէս զիջանքը ինչպէս զիջանքը և զիջանքը կարծիք մը, անոր հոտով պիտի բռնի լանջի որ բազում թեան և առողջութեան նշան է կրննի գինամարմները, և որոնց պատկերով արդէն զարդարուն են գեղարցի հարսերու սիրուն ճակատները : Կ'զգամ թէ նոտոս տեղը խորախորհուրդ մտածումներու մէջ կը դեղերիս, այդ պարտէզներու անունը որ հարցուցիք, ախանայ սարտուս մը եկան վրայ և երկար ան մը թուս կսկորդէդ, երեքտրական էր այդ բառի աղբուսը. կարծեմ այն կոչանք որ կուսը ուսին առջեւէդ կանցնէր, քեզ սրտատխանեց ճոճաւոր ձայնով և ամօթխած գէմքով մը — Օտենցն է. — կարծէ, այս կարծէ որ հառաչես... : Օտենան թէն չանցեալ իր գերեզմանին վրայ յիշատակարան մը, սակայն այնուանց հարստանի գեղին մէկ անկիւնը կանգուն կը մնայ անոր յիշատակարանը, գեռ այսօր կը յիշեն անոր անմահ անունն, իր ճննդեան յիշատակարանն է այն. ամեն բերան կը խօսի, ամեն անցորդ կը լսէ, Օտենց պարտեզն է այն... : Մակայն, իր հանճարին սիրահարները, իր սրտին բարեկամները, իր մաքին աշակերտները տակաւին չը կրցին կանգնել անոր մաւրան յիշատակարանը... : Եւ ինչ մենք Պօլսեցիներս թեթեալար մեծ մեծ խօսիչ գիտէնք, բայց ոչ փոքր փորը գործել :

Օտենց պարտեզը ձգէ, հողիդ ու սիրտդ այնքան յազեց ու խափեց. անս կարգաւ իրարու կը ժպտին նէմցէին, կիւրճանց, Սիմոնեց և այլոց պարտէզներ, անոնց կիւրճանի ծիծաղները անշուշտ պիտի փարստեն հողիդ մատոյններն ու սրտիդ թախիծը : Մօտեցի՛ր գիւղի մեծ — աղբիւրին, կոյսերն ու նոր հարսերը կուսերը ձեռին, ժպտը շրթունքներուն վրայ անուշ ու դրսուիչ նույնածքներ կը ձգեն վրայ, խոյս կը տաս անոնց հրաշայտ ախարիկներէն և աչքերդ կը խոնարհեցնես, մասամբ կը թախախտ փողոցներուն մէջ շանթերու նման իրարու ետեւ կը պատահիս կարմիր այտերու և սեւ աչքերու ցոլացումներուն, խոյս տուր անոնց մէջ աչք շատերու սրտեր արդէն փառած ու հալեցուցած են : Մտի՛ր եկեղեցին, ուր միայն կրնան հազիւ սրտիդ, հողիդ, մտքիդ յազումներն ու փոթորիկները կը տեսնեմ թէ անհաւատ հողիդ մեր երանելի հայրապետներու անցեալ ժամակներուն մէջ կը սուղի. Սուրբ Շնորհալիի Մարտիրոս շառնջե երբ լակելիներուդ ջիղերը կը թրթոսայնեն, կը թրթոսան նաև սրտիդ փախուկ և զգայուն թեւերն և անոնց կը յաջորդեն ցամքած աչքերուդ թխափայլ արտատուքները, ջերմեռանդ հաւատքով ծունր կը դնես և ո՛ր իտէ ի՞նչեր կ'աղօթես ու կը մաղթես... : միայն սա չափ կրնամ հասկնալ թէ եկեղեցիէն բուրբուրի փոխւած դուրս կ'ելլես, արտասուածութեամբ աչքերուդ մէջ կը կարգացին հեռաւոր յայտն մը շատեալ կայծեր... :

Բառական յոգնեցար, հանգիտ ա՛ռ, ես մնացածները յաջորդաբար քեզ կը պատմեմ :

1888 Յուլիս ամսի մէջ օր մըն էր, Հաւաւ այցելեցի, այլ օր մասնաւորապէս հրաւիրեա՞ծ էի մեծատուն Արփաճեան Նազարէթ էֆէնտիէ, որ նոյն տարւան գիւղին աստանորդական տուրքն առած ըլլալով հոս փոխադրեա՞ծ էր միայնակ: Քաղաքէն հեռաւ ընկեր մը ունէի՝ վարդան էֆէնտի վարդանեան, ընիկ Չմշկաճակցի, Բալուի կառավարութեան արկղակալը, այս աղնիւ անձնաւորութիւն իմ միակ միխիթարիչս էր. եթէ Ղազարոս էֆ. Եղալըճեան (ընիկ Չմշկաճակցի, նախկին արկղակալ Բալուի), վարդան էֆ. վարդանեան, Նազարէթ էֆ. Արփաճեան և Յովհաննէս էֆ. Տէր Մինասեան չըլլային, Բալու ինձ համար բանտ մը պիտի դառնար:

Յովհաննէս էֆ. Տէր Մինասեան, ուսեալ և բարեկամութեան հաւատարիմ անձնաւորութիւն մըն էր, վարժապետական ասպարէզէն սուսձացած, օրէնագէտ, դատարանի անգամակցութեան և քաղաքական ժողովի ատենապետութեան փախուկ և բարձր պաշտօններու կոչւած. սակայն այս մեր սրտակից բարեկամին միխիթարութիւնը՝ անագորոյն բազդը երկար ատեն մեզ վայելել չը տուաւ, որովհետև չարագործ և մարդասպան ձեռքեր անոր կեանքի թելերը խղեցին... չարաչար սպաննելէ վերջը Եփրատ նետելով, որուն այլակերպած դիակը չորս օր վերջը փրփրեալ ալիքներու մէջէն հանեցին. այն ժամանակ ուր որ անկ էր գիմււեցաւ, սակայն չարագործները տակաւին անպատիժ կը մնային. այս վերջին օրեր Տիգրանակերտի նորընտիր կուսակալը Բալու այցելած միջոցին Յովհանն.

նէս էֆէնտիի այրի կինը աղերազրով անոր գիմած և արդարութիւն պահանջած է. Նորին վսեմութիւնն ալ խտտացած է անպատիժ չը թողնել չարագործները և այս առթիւ բանտարկած է մի քանի քիւրտեր, որոնց հետ յայտնի չարագործ Հիւսէյին պէյը:

Վարդան էֆէնտիին հետ Բալուէն ելանք և աղաղային երգեր երգելով երկու ժաման ճանապարհը մէկ ժամէն կորեցինք և հասանք Հաւաւ գիւղը. ձիերը քրտնած ու փրփրած էին, սուինք զանոնք մեզի դիմաւորողներուն, որպէս զի քիչ մը պտտցնելէ վերջը քաչէն ախտա: Մտանք երկյարկ տան մը բաւական զարդարած սենեակներէն մէկը, որուն մէկ անկիւնը նստած էր Արփաճեան և միւս կողմն ալ երկու գիւղացի: Այստեղ պէտք է յիշենք, որ Հաւաւի տուները խել մը քաղաքներու գիւղական աներէ աւելի ճաշակաւոր շինւած են և մեծ մասամբ երկյարկ, պարագայ մը, որ շատ գիւղերու մէջ հազադէպ է: Կան գիւղեր, որոնց աները գետնափոր խոռոչներէ չեն տարբերիր, բնակութեան պատմութեան մէջ ամենա նախնական յիշատակութեան տեղը բռնելով: Հաւաւի և այլ մէկ քանի գիւղերու բնակիչները Պօլիս տուն չենող վարպետներ են, որոնք կը բնակին Չուքուր-Չեղմէ խան. և արդէն այս գիւղեր Ագնաւորեանի և Եէմյէի նման երևելի ճարտարապետներու ծնունդուած են:

Երբ սենեկի դռնէն ներս մտանք, Արփաճեանի Կպիտը փայլեցաւ և ուրախութեամբ ցատկելով մեր սուջի, ըստա.

— Հրամայէք, բարի եկաք:

Մենք սովորական բարեւ տալով յոգնաբեկ պա.

առահանին առջև նստանք, առատորէն շնչելով քաղցրազով օդը, ասոր մեծ սէտք ունէինք, վասն զի երկու ժամուան ճանապարհը երխասարգական եռանդով մէկ ժամուան մէջ առած էինք, այն ալ Յուլիսի կիւղիչ արեւակաւն ճառագայթներու տակ, անհանգիստ ձիւ վրայ :

Քաղցրահամ և գովացուցիչ յրէն մէկ երկուս գաւաթ խմելէ վերջը, սկսանք սովորական խօսակցութեան, մէկ կողմէ կլկելով կալերէ ելած փոշին, սրանձրի նման կը տեղար. բոլորովին սպիտակցած էին մեր սև հագուստներն և ֆեւը, ոտկայն գիւղական այս կեանքին վարժ ըլլալով, այնչափ չէինք նեղէր :

— Չեր Պօլսի տիկիները այս տեսակ աշխատութիւններու կըրնան տոկալ, ըստ Արփաճեան էֆ. դուրսը ցոյց տալով, ուր գիւղացի կիներ կալերը կը կամնէին և կը հոսէին :

— Պօլսի տիկիները եթէ ստիպին այս կարգի գործեր կատարել, աւելի լաւ և աւելի շատ կը գործեն, պատասխանեցի :

— Ը՛հ, ըստ Արփաճեան, Պօլսի կիները ինքնին բանաստեղծութիւններ են միայն, անոնք ֆիլիթրական աշխատութեանց չեն կարող տոկալ :

— Բանաստեղծութիւններ են ըսելով ինչ հասկըցնել կուզէք, ըսի միտքը չը հասկնալ ձեռքնելով :

— Բանաստեղծութիւններ են ըսելով, անոնք փափկակազմ, նորաձևութեանց սիրահար, հագուելու շքեւութեան տէնչացող, սիրաբանութեան վարժ ըլլալնին հասկցնել ուզեցի. ձեր կիները երկու չաղայ (տղայ) որ բերեն երրորդին չին կրնար գիմանալ ու այլ

այլ անբնական ու մեղաւից միջոցներու կը դիմեն. ասոր համար չէ՞ որ բաճ Պօլսի հայերու թիւը կը նւաղի :

— Այդ տարբեր լոնդիլ է, եթէ խօսքը թիւերու նւաղման վրայ ըլլալ, ես ալ կաւարկեմ. թէ՞ Պօլսի պանդուխտներ ունիր, որ տասը կամ տասնհինգ տարի հայրենիք չեն գար, ընտանիքի երեսներն սեռները, հետեւաբար այդ մասին զաւտուցին ալ կը հաւատարի Պօլսեցիին, սովորյն խնդիրը այդ չէր. ես կրնամ ապացուցանել թէ Պօլսի կիները ձեր կիներէ հալոր անդամ տեւի լաւ կը գործեն :

— Ես երբէք չեմ հաւատար թէ Պօլսեցի կին մը, մանաւանդ գոյրոցէ ելած օրիորդ մը սըվսր զէս պիտի աշխատի: Այս ըսելով տասնհինգ տարեկան էջ, մը ցոյց տաւ, որ յարդաւից ահային կողով մը կռնակը բռնցած փոքոցէն կ'անցնէր :

— Գուք Պօլսեցիին հեռուէն դիտեր էք, Պօլսի ընտանիքներու վարչն ու բարբը, յատկաթիւնն ու սովորութիւնները լաւ հասկնալու համար պէտք է որ ամեն դասակարգի ընտանիքներու մէջ մտած ելած ըլլաք. անոնց մէջ այնպիսի շարաշար աշխատանքներ կան որ ձեր տասը կիներու գործը կը տեսնեն : Ես Պօլսի կիներ կը ճանչնամ որ աշխատութեան մտրմուցումն են: Աւելորդ է օրինակներ մէջ բերել: Այսչափ միայն ըսեմ որ Քարբերդի գիւղերէն մէկուն մէջ պատահեցայ Պօլսէն հարս եկած կնոջ մը, որու գործունէութեան վրայ ամբողջ գիւղացիք կը զարմանալին: Գիւղացի կին մը մէկ խուրձ չաղած ժամանակ ինքը երկու կը քաղէր. առաջին տարին գիւղական գործերը քիչ մը իրեն ծանր եկան, սովորյն կամայ

կամաց նոր կեանքին՝ փորձելով՝ ասորի մը վերջը երկու գլուխացի կիներու տեսած գործը ինքը մինակ կը կատարէր: Ես համոզւած եմ որ Պօլսեցի կին մը սթարագային և միջախոյրին՝ յարմարելով կարող է գաւառացիէն տեւի լաւ գործել:

Չեր մէջ բերած օրինակներու ճշմարտութեանը կը հաւատամ, տակաւին անսենեք թէ Պօլսի գպրոցէ ելած օրիորդ մը՝ որ գլուխ լաւ դաշնակ ածել, պիտի կրնայ սա աղջկան նման համարձակ փոփոցէն անցնել. այս բանով մեծ կուժով ուսին ջուր բեռցած աղջիկ մը ցոյց առաւ:

Շիտս կը, անմիջապէս սրտատխանել ինձ անհնարին թեցաւ:

— Այդ կարգի կրթութիւն անուսներու համար չէր իմ խօսքս, ըսի:

— Իմ խօսքս ալ ստանց կը վերաբերի, բանաստեղծութիւն ըսելուս վրայ խնդացիք. փսփոսկ ձեեր ունենալ, երկու խօսք ֆրանսերէն զրուցել, դաշնակ տծել, լաւ պարել, միթէ ասոնք բանաստեղծութիւններ չեն:

— Է՛հ, ըսի, սենեակի մէջ փակած պիտի մընանք, դուրս ելնենք քիչ մը հով առնելու, կրկին կը շարունակենք մեր վիճարանութիւնը:

— Աւելի լաւ կըլլայ երթալ կալերը և անոնց ա խատու թիւնները գիտել, ըսաւ վարդան էֆէնտի:

— Էրթանք, ըսինք միտքերան և դուրս ելանք: Նախապէս գնացինք կալերը, ուր հինգ վեց կին և նոր հարսեր ցորէն կը կամեէին, մի քանի աղջիկներ ալ մեծ կողմերով յարգ կը կրէին:

Գլուխկան աշխատութիւններու մէջ, այսինքն հեր-

կելու, ցանկու, քաղելու, կամեղու, հոսելու և ցորենը անսական պէտքերուն յարմար վիճակի վերածելու համար մեծ մասամբ գիւղացի կիները կաշխատին. այրերն միայն երբեմն կրնկերակցին կիներան հերկի և ցանելու ժամանակ:

Համարձակ կրնանք ըսել թէ, Հայրաստանի մէջ ինչ որ գնահատելի և կարևոր մի գործ կայ, այն ալ կիներու ձեռքով կը կատարուի. գուլպան, հիւսողը, կաթը կթողը, պանիր, ու մածուս պատրաստողը, հագուստ ու գորգ շինողը, արդար եղ հանազը, կերակուր ու հաց եփողը, վերը շիշած գոշոռային աշխատութիւնները կատարողը, անսական պէտքերը հոգացողը ևայլն, ևայլն, այս բոլորը ընողը միայն կինն է:

Պօլսի տան տիկինը՝ հացէ՛ր սկստալ մինչև ամենամանր պէտքերը իր ձեռքին տակ պատրաստ կը գտնէ, իսկ գուտառացի տան տիկինը ամեն բան իր օրհնեալ ձեռքերով պիտի սրտրաստէ. գաւառներու մէջ կին մը ինքնին գործարան մըն է, սրան շարժիկ կ'ապրին ու կը բարգաւաճին գաւառները:

— Պօլսեցիները պիտի կրնան կատարել ասոնց գործը, ըսաւ Արփոճեան, մտանանիչ ընելով կիներու բազմութիւն մը, որ մըջուսի նման կը կամեէին ու կը հոսէին:

Ասանցմէ երկուքը կը հոսէին, մէկը յարգը կը լեցնէր, երկու հարսեր յարգալից կարգերը կրնանակն բեռցած կը կրէին, ոմանք կը կամեէին. բուրին դէմքը ու վրանին կալերէն ելած փոխով ճերմկցած էր, ինչպէս նաև մերը. սրկնէր ուրիշ գործեր կը կատարէին, ամբողջ գիւղը մըջանոցի մը լերածած էր, ամեն ոք ստրի վրայ, ամենքն ալ

կ'երթան ու կը դան, շատ գարմանալի, գրաւիչ ու խորհրդանոր է տեսարանը, օգն ու փողին, մաքրիկ ու կենդանիներ, ամեն ինչ կը շարժի:

Արվաճեանի հարցման և սոստեարանին հանդէպ ես լռած էի:

— Լուսիներ խոտովանութեան նշան է, ըստ մեզ մտա կայնող և եւրոպական հագուստ կրող երիտասարդ մը որ նախապէս բարիած էինք զինքը:

— Շխտակը պարոնին խօսքը հաստատելէ դատինձ ոչ ինչ կը մնայ, ըսի:

— Թէև հաւաքի եմ, բայց Պօլիս կը թւած և մանաւանդ ամեն գասակարգի մէջ մտած ելած ըլլալու համար Արվաճեան էֆէնտիի կարծիքը ատյգ կը գտնեմ:

Մինչև այս վայրկեան անոր ո՞վ լինելը չէի իմացած. երբ Պօլիս կը թւած բաւերը ըսեցի, հետաքրքրիկ եղաւ և խնդրեցի Արվաճեանէն որ ինձ ծանօթացնէ:

Սոսնց Արվաճեանի ներկայացման սպասելու երիտասարդ Պարմը ըստ եւրոպական սոխութեան ինքզինքը ծանօթացուց հեռեւալ խօսքերով:

— Յակոբ Միմնեան, նախկին աշակերտ Պօլիսի կայսերական Լիտէի, ուսուցիչ Բարբերդի ազգային վարժարաններուն:

— Ուրեմն գաստիարակ մը, աղին բարձրագիւն մշակներէն մէկն էր, ըսի ձեռքը սեղմելով:

— Ազգին ինչո՞ւ ու պատանները ըսէր, սերբիկ Տօթէօր:

— Քաւ լիցի, ի նշու ազգին խեղճ ու պատանները ըլլաք:

— Դէհ, գուք Պօլսեցի էր, քիչ շատ աղգային

գրականութեան սիրահար կ'երևար, անշուշտ Պօլսի վարժապետներու վիճակը լաւ գիտէք, արդ, ատոնց խեղճութեան տակ լաւ գիտէիք ևս արեւելցեցէք, այն ստեղծ պիտի ունենար գաւառացի վարժապետներու կեանքը:

Ուրախալի գէնք մը անէր երբ այս շնորհները արտասանեց, բայց այս խօսքերը միթէ իր ներքին վշտերը չէին մնաներ:

— Պօլսի վարժապետներու վիճակները մտածելու բարեբաւ եմ. ձերինները ևս արեւելի բարեբաւ պիտի ըլլան քանի որ գաւառացի մէջ փոքր ծախսով կ'ապրուի ըսի:

— Ձեր այդ գիտելութեան ես կը հակառակիմ. նախ եթէ Պօլսի վարժապետներու վիճակները բարեբաւ եին, ի նշու համար համբարձում Ֆրէքճեան, Տիգրան Մանավեան և իրենց նմանները, ազգին անխոնջ ու անվհատ մշակները, թշուառութեան մէջ մեռան ու թշուառութեան մէջ թողուցին նաև իրենց գաւակները, երկրորդ գաւառներու գիտակեցութիւնը մէջ բերելով վարժապետներու վիճակը նախանձելի ցուցուցիք, սակայն ոչ միայն հացի, կեցցէ մարդ, այլև բանի՞ Տեառն, անշուշտ ինչ ուղեւ քսելու կը հասկնաք:

— Արդի աղգային գործիչները կը խորհին և կը մտածեն վարժապետներու վիճակը բարեբաւ ուրեմն յուսահատիլ պէտք չէ. լաւ է անպան քան երբեք:

— Քանի որ տակալին կը խորհին, բնականաբար չեն գործեր, մինչև որ չը գործեն մեք ձերքերը չեն բուժիր: Ուսումն. խորհրդի անխաղտաբար խորհրդէն ետեան՝ Տօթէօր մը ըլլալով լաւ կը կրէ պայծառ



ճշմարտութիւնը, լաւ գիտէ թէ կան վէրքեր որ անմիջական դարմանի կը կարօտին, ապա թէ ոչ հետեանքը վատ կ'ըլլայ. այս տեսակ վէրքերէն է նաև վարժապետներու վիճակը:

— Է՛հ, այս սեղ վարժապետանոց չէ՛, դո՛ւք եղաք աղգի վրայ մտածողները, գործի ու պաշտօնի վրայ գանձողները թող մտածեն, ըսաւ Արփածեան կատակաբար և աւելցոց:

— Ճաշի ժամանակ է, այդպիսի խօսքեր փոր չէն կշտնայներ այլ կ'անօթեցնեն, ապաւ ատրի այդ կարգի խնդիրներու վրայ մտածելով ու խօսելով գըլ լուխս ճաթեցուցի. երթա՛նք, երթա՛նք գառ մը խոռովել տւի, գինին ալ առատ. գլուխնիս տաքցնենք, այն ատեն ես ձեզմէ աւելի պիտի խօսիմ՝ այդ խնդիրներու վրայ:

Արփածեանի հրամայական ձայնին հետևեցանք ամենքս ալ. Պ. Յակոբ ուզեց բաժնել, սակայն Արփածեան անոր ձեռքէն բռնեց և մեր խմբին մէջ մացուց՝ ըսելով:

— Է՛, գեղի մէջ ալ եւրոպական նրբութիւններու տեղը չկայ. պէ՛ մարդ, ասանկ բարեկամներու շըրջանը ձգելով ո՛ւր պիտի երթաս:

— Տուն երթամ կըկին կը վերադառնամ, պատասխանեց Պ. Յակոբ:

— Չըլլար, միտտեղ պիտի ճաշենք:

— Շիտակ կըսեմ որ կէս ժամէն կը վերադառնամ, անգամ մը տուն երթամ ու գամ, ըսաւ Պ. Յակոբ մեզմէ բաժնելու անհամբերութեամբ: Ես չը կըցի անոր տուն երթալու անհամբերութեան պաղտնիքը հասկնալ:

Երկար վէճէ մը յետոյ կէս ժամէն գալու պայմանաւ Արփածեան անոր ձեռքերը թողոց և ծիծաղով մը ըսաւ:

— Գիտեմ ի՞նչու կը բաժնելս, միանալու համար անոր հետ, կ'երևայ թէ ժամադիր ես եղած . . . :

— Չարածճի, լեզուդ կարճեցուր, կէս ժամէն պիտի գամ ըսի քեզ:

Այս կատակխառն ու մտերմական խօսքերը իմ հետաքրքրութիւնս շարժեցին. մտադրեցի որ յարմար պարագայի մը, մանաւանդ գինովութեան մէջ՝ միանալու համար անոր հետ խօսքին բանալին կորզեմ անոնցմէ:

Վերջապէս մեր մտանք տուն, տան տիկինը բակին մէջ կովը կը կլթէր, և ինչպէ՞ս. ակտուէն հորթը բերաւ և երկու ումպ ծծել տալէ վերջը խեղճը բաժնեց իւր մօրմէն և դարձեալ քչեց ախտ և ինքն եկաւ կլթել կովը: Հետաքրքրութիւնս կը կրկնապատկէր երբ երկու ումպ ծծել տալէ վերջը զայն մօրմէն կ'անջատէր. հորթը դժկամակութեամբ և կարծես արտասուելով կը բաժնէր. խղճալով տան տիկնոջ հարցուցի:

— Սառա խաթուն, ի՞նչու հորթը ծծել աւիր և ի՞նչու խեղճը շուտով կը բաժնեն, թոյլ տուր կամ կուշտ մը ուտէ և կամ ծծել մի տար:

— Է՛հ, հարիմ ափէհառ, խալի հորթը չի ծծի, կովը կաթ շատ չի տար, հէ՛մ էլ դժար կըլնի, հորթը կաթին ճամբայ տի բանայ:

— Թէ որ ծիծեքը բամբոս կաթ չի տար:

— Հէ՛մ քեզ, հէ՛մ ալ դժար կուգայ:

— Ի՞նչու մասներդ կը լզես ու յետոյ կը կլթես:

— Երբ որ Գրիգորը մտնելու չէր բռնկել, էտպէս խօսեցաւ կը սահին:

— Գրիգոր ալ ինչ հետաքրքիր մարդ էր, ըսաւ վարդան Էֆ., ստուր իրենց գործերուն վարդանն են եղած, ելնէք վեր:

«Պարտաւորութեան ճանապարհով»

Գլուխները բաւական տաքցած էին, օդին գաւաթները սեղանի շուրջը կը դառնային, պատուհանէն քաղցր հով մը կը գար զովայնել մեր հարմրած գէմերը. խօսակցութեան նիւթն էր Պ. Յակոբի ուշանալը. կէս ժամ անցած էր և տակաւին երեան շէր ելած, ետէն մարդ զրկեցին, բայց գացողը անկէա տունը գտած չէր, ցերեկէն ի վեր տուն եկած չըլլալը յայտնած էր իր կինը:

— Բայց զարմանալի բան է այս, ըսի, ստուր երթալու և կէս ժամէն դառնալու խոտուածով մեզմէ բաժնեցաւ, ընդհակառակը տուն հանդիպած չէ:

— Անոր մտքը ես հասկցայ, չը պիտի թողնէի, բայց թերեւ իրօք տուն երթալու պէտք ունենալը կը մտածէի. չարածճին, գիշեր ցերեկ խելքը միտքը անոր վրայ է, ժամերով կ'սպառէ միայն անոր անցնելը տեսնելու համար, ըսաւ Արիաճեան սրտմբտեալ:

— Բայց ո՞ր գացած կրնայ ըլլալ:

— Հը, գնացած տեղը ո՞ր պիտի ըլլայ, աղբիւրին գլուխը, տես հիմայ խաչօն հոն զրկեմ զինքը պիտի գտնայ:

Տան փոքր տղուն խաչօյն պատուիրեց որ աղ-

բիւրին գլուխը երթալով հեռուեալ երկուորը վարժապետին տայ:

«Սիրելի Պարտն»

«Մեր բարեկամական շրջանը անտրդած եզար «Ժամագրութիւնը չը յարգելով: Տօքթօրն ի՞նչ գաղա- «Վար պիտի կազմէ վրադ. բարգրտութեան կեղծ ու «պատիր ձեւերդ ո՞ր պէտք է գնել... ս' գիտէ այս «վայրկենիս ի՞նչ ապուշ դէրք մ'ը ունիս. սէրը յիմարու «Թիւն չը նշանակեր, բայց դու պարզապէս յիմար մըն «ես. այս տարօրինակ վարմունքդ Տօքթօրին ալ զար- «մանք պատճառեց. եթէ թղթիս կտարն նեքէր լաւ «մը պիտի լայնի քեզ...»

«Տոմսակ առածիդ պէս պէտք է գտա, այտ թէ սոյ գիտես ա...»

«Ն, ԱՐՓԱՃԵԱՆ»

Երբ այս տոմսակը խաչօյն յանձնեցին, ես պտտըրտակաւ մը դուրս ելայ և դուածքը ընդօրինակեցի Յուշատետրիս մէջ:

Տոմսակը զրկելէն հինգ վայրկեան վերջը խաչօյն հեռ միասին ներս մտաւ. Պ. Յակոբը ժպտաւ գէմ, թղթի կտորը ձեռքը բռնած:

— Կը ներէք Տօքթօր, խոտուցած ժամանակէս մի քիչ ուշ հասայ. կամքէս անկախ պարագաներ պատճառ եղան իմ այս յստագման: Սոյ բտելով եկաւ սեղանը բազմելու:

— Ճիշդ է, ըսաւ Արիաճեան հեղծօրէն, ճիշդ է, կամքէդ անկախ պարագաներ ունիս... ես ալ գիտեմ, գուցէ Տօքթօրն ալ հասկցաւ, հէլէ՛ գտաւ թ մ'ը օդի խմէ, այդ հաշիւը վերջը կը տեսնենք...:

Հետաքրքրութիւնս աւելցաւ, համբերութիւնս ալ հատաւ: Սիրահարութեան խօսք մը կար, սակայն Պ.

Յակոբը ամուսնացած կը կարծէի, որովհետև զաւա-
ռացիները տասն և չորս տարեկանէն կ'սկսին ամուս-
նանալ, մինչդեռ Պ. Յակոբ քսան և ութը տարեկան
կար: Ուստի միջամտելով հարցուցի:

— Պ. Յակոբը արդե՞օք ամուսնացած է:

— Այո՛, ըստ Արիստեան, ամուսնացած է և
միանգամայն երկու զաւակներու և երկու կնոջ ալ
տէր է:

— Երկու կնոջ ամուսին... ասոր մեր օրէնքը
չը ներեր. ինչոքեմ՝ իրողութիւնը ինչ որ է այն պատ-
մեցէք, ըսի քմծիծարով մը:

— Ժամանակը չէ Տօքթէօր, ըստ ուսուցիչը, ես
յետոյ ձեր հետաքրքրութիւնը կը դոհացնեմ:

— Եթէ դուն չըսես, ես արդէն պիտի պատմեմ,
ըստ Արիստեան:

— Ծածուկ բան մը չունիմ որ վախնամ, միայն
ճշմարտութիւնը խեղաթիւրելու չէ:

Այս մեջոցին ախրայոյց ջութակի երգախառն
ձայն մը լսելի եղաւ. գլուխս դարձուցի դէպի դուռը,
երկու աչքէ կոյր ժիր ու եռանդուն մարդ մը ջու-
թակ ձեռքը և ազգային երգը բերանը ներս մտաւ,
նոյն միջոցին բացի ինձմէ ամենքը միաբերան կոչեցին:

— Օ... բարի եկաք, հրամեցէք, այդ ինչ պա-
տիւ, շնորհակալ ենք, մեր ուրախութիւնը կատարեալ
պիտի ըլլայ ձեր շնորհիւ, հրամեցէք սսնկ վեր ելէք:

— Բարի երեկոյ, ըստ կոյրը ժպտազին և նստա-
ամենէն վեր:

Բարի՛ եկաք, սովորական բարեւ՛ ամեն բերան
կրկնեց, բայց մեր խօսակցութիւնը ջութակի ներդան էֆ. և գաւաթը բարձրացնելով, Մ'եւքոն կիւր-
դաշնակ ձայնի և ժպտազէմ՝ կոյրի երգեցողութեան
մէջ խեղդեցաւ:

Աստած կոյրերու տեսողութիւնը առնելով կար-
ծեա անոնց սրտին մէջ կը գետեղէ անսահման ուրա-
խութիւն և անոնց դիմաց վրայ մշտապէս ժպտալ,
խորհրդաւոր փոխարինութիւն մը:

Այսպիսի ուրախութեան մը մէջ երաժշտութիւնը
ունի իր հրապոյրը, իր սրտայոյզ և ազդեցիկ շեշտերը,
օղիի չօխ ան ալ կ'ազդէ մարդու, սա տարբերու-
թեամբ միայն, որ օղին ուղեղին և նազը սրտի հետ
կը խօսի. օղին՝ ուղեղը կը յիմարեցնէ, իսկ նազը
սիրտը. այս երկու յիմարութիւններու մէջ մարդ կը
մտնայ իր ներկան ու ապագան և ինքզինքը պիտի
կը յանձնէ անոնց հոսանքին: Օղին ինչպէս ուղեղի և
բոլոր ջիւղերու մէջ կը շրջի, նոյնպէս ալ նազի ձայնը
բոլոր ջիւղային դրութեան մէջ ժուռ կը գայ, որով
բնազդական շարժումներու բազմաթիւ պատկերներ կը
բոլորին սեղանին շուրջը. ամեն ոք նիւթ մը սուած
կը ճռուէ, մէկը փիլիսոփայ, մէկը բանաստեղծ, ուրիշ
մը վիպասան կը գառնայ:

Ահա մենք այս վիճակի մէջ էինք: Կոյրին ջու-
թակէն զատ իր իմաստալից և զարճալի խօսքերն
ես մտիկ կ'ընէինք. առանց ճանշնալու զինքը, իր հո-
գին և իր սիրտը, մասնաւոր համակրութիւն մը ու-
նեցայ այդ սիրուն կոյրին:

— Օղի մըն ալ կիւրճեանին տէք, ըստ վար-
ճեանի և անոր եղբորը՝ մեր իրաժշտին կենացը:

Նոյնը կրկնեցին և կոչնականները:
Գաւաթներու իրարու փախման շուկը կեցցի. աղա-
ղակներու հետ խառնած պտտուհաններէն զուրս կը
ցնդէր, և ո՛ր գիտէ թերևս ծով ու ցամաք կարելով

կ'երթար լսելի ըլլալ տարտիաներու անհոյներուն...:

Յաջորդաբար ուրիշներուն կենաց համար ալ բաժաններ պարպւեցան, և յապկապէս այն անձնաւորութեան յիշատակին, որով կը պարծի հաւա: Երբև ծննդավայրը:

Օղիի սեղանին յաջորդեց ճաշի սեղանը և անարատ գինին, գինիի փարջերն պարպւեցան ազգին ճմարիս գործիչ յայտնի անձնաւորութիւններու կենացը և յիշատակին:

Գիշերուան ժամը հինգին սեղանը վերջացաւ. գաւառներու մէջ ուտելիքները պարզ, անեղարար և զուարաններ են, սերն և անուշահոտ մեղրը, ալիքի նման ծփացող արդար իւզի մէջ եփած հաւկիթը, խոտոված գառը և անասակ գինին, համով պանիրն և պաղուկ ու մարտիչ շուրը կարծես մարդուս կենդանութիւն կը տան:

Ժամ մը ևս խօսակցութիւնը և երգեցողութիւնը շարունակելէ վերջը գոհ սրտով մտանք անկողին:



Կովերու ու եզներու բառաշիւնը, ոչխարներու մայիւնը, ձիերու մրնջիւնը, արաղաղներու խօսիլը, բնակիչներու ժխորը մեզ աւետեցին արշալոյսի ծագումը, աշերս բացի, ինչպէս նաև պատուհանը, ո՛հ, ինչ քաղցր և հեշտաբոյր էր առաւօտեան զով գեփեւոր, որ երկ'քէ կ'իջնէր, գարթնոց թևերով կը շոյէր մեզ:

Քիչ յետոյ, կարծես երկնքի բարձունքէն խորախորհուրդ ձայն մը ևս կը գար, Քաղցրահայտաց Ս:

Ատուստաննայ վանքի զանգակն էր այն, որուն հետևեցաւ գիւղին եկեղեցիին զանգակի ձայնը, որ հաւատացեալ շերմեռանդ սրտերը ինքն կը քաշէր: Երբ պատուհանէս դուրս նայեցայ, ուրիշ բան չը տեսայ բայց եթէ ընդհանուր շարժում մը, գիւղացի կիներ կըսէին իրենց սովորական աշխատութեանց. այժերն ու ոչխարները հրճանքով կը ցափարտէին լիաթոքն շնչելով առաւօտեան քաղցրաշունչ հողմիկը, ծաղիկներու ու մարդերու անուշահոտ բուրմունքը: Հարսերը և մանր տղաք զանոնք տներու մուրներէ հանելով կը միացնէին գիւղին ընդհանուր հօտին, որ հովիւի մը առաջնորդութեամբ պիտի երթան անմեղօրէն զարձանալ կանաչազեղ մարդագէտիներու մէջ, ծագկազարդ բարձր լեռներու վրայ, զովացուցիչ ու քաղցրակարկաղ ջրերու եղերքը, ունկն դնելով հովիւի սրինգի հոգեգրաւ հառաչանքներուն, ո՛հ, երանի, հազար երանի ձեզ ո՛վ զարթաթուիչ անասուններ, դուք մարդկանց նախանձքը կը շարժէք ձեր երջանիկ ու խաղաղաւետ կենցաղով:

Տանտիրոջ հարսերը անմիջապէս սենեակ մտան, անկողինները վերցուցին, սենեակը աւելցին և երեսու լւանալու համար ջուր բերին: Անարատ կաթը խմելէ վերջը խմբովին գնացինք եկեղեցի, սրբազին խոր լուսթիւնը այնտեղ կը տիրէր, քահանայի մրմունջները միայն այդ խորհրդաւոր լուսթեան սրբազան միջնուրտը կը շարժէին, այդ շարժման և խնկաբուրումներու հետ գեպի երկինք կը բարձրանան հաւատացեալ հոգիներու մաղթանքները:

Եկեղեցին հաւաքւած էին մի քանի ձեր կիներ և տղամարդիկ, գիւղացիները շաբաթ երեկոյ, կիրակի

առաւում և սօն օրերու մէջ միայն բաղմութեամբ կը հաւաքուին եկեղեցին :

Եկեղեցին էր խորհուրդը վերջացուց. երբ դուրս ելանք, նկատեցինք որ Պ. Յակօբը մեզէն առաջ դուրս ելած կ'ապասէր :

— Նախաճաշը մեզի ընենք, ըսաւ Պ. Յակօբ :

— Ես գործ ունիմ, կալերը պիտի շարեմ, ըսաւ Արիաճեան :

— Հիւրերդ կրնա՞ն գալ :

— Ազատ են, քիչ մը վերջը թերևս ես ալ գամ :

— Շատ լաւ, ուրեմն մեզ երթանք, ըսաւ Պ. Յակօբ զիս և վարդան էֆէնտին հրաւիրելով :

Գնացինք Պ. Յակօբի տունը, զիւզին շքեղ աներէն մէկը կը համարէր, առաջին անգամ մեր գէմը ելաւ քաննելորս տարեկան մանկամարդ հարս մը սե աչի, սե յօնքերով ու մազերով, կարմրայտ և խիստ գեղանի, բարձրահասակ և առողջակալ :

Հաւառի կիներու մէկ մանրանկարն էր այն, այ զիւզի կիները վերը յիշատակած յատկութեանց մէկերար կը գերազանցեն :

— Պատիւ ունիմ ձեզ ներկայացունել կինս ըսաւ Պ. Յակօբ աչքերը ընազդաբար խոնարհեցնելով կարծես անոր երեսը նայելու կ'ամաչէր :

Գլխով բարեկեցինք իսկուհին, նէ ալ իր ժպտող գէմքով մեզ բարեկեց. ժպտար անմեղ ու անկեղծ էր երբ սենեակ մտանք, երկու փոքրիկ սիրուն գեղազէմ աղսք մանկական խաղեր կը խաղային :

— Ասոնք ալ իմ դաւակներս են, վահան և վարամ, ըսաւ Պ. Յակօբ :

— Խիստ գեղեցիկ և լաւ կազմ ունին, ըսի :

— Ինչպէս նկատած էք, մեր գեղի բոլոր աղաները այսպէս են :

Նախաճաշելէ առաջ իմ գրագարանը տակն ու վրայ բրինք, հին և նոր ընտիր գրքերու հաւաքածոյ մը կար, գրագարանին մէջ մեծ աեղ կը բռնէին վեներտիկի վանքէն ելած հասընտիր գրքերը, Ռոսսահայ և Թրքահայ յայտնի գրագէտներու վէպերը և բանաստեղծութիւնները, Արևելեան Մաւրյոյ և Երկրագունտի տարեկան հաւաքածոյները, Փարս հանդիսի հրատարակած ամբողջ թիւերը և խել մը զխտական գաղիերէն գրքեր. բացի Թշուառներէ, Թարխառակակի Հրեայէ և Ռաֆայէլէ ուրիշ թարգմանած գիրք մը չկար իմ գրագարանին մէջ. անբօրինակ թեցաւ ինձ այս երևոյթը :

— Թարգմանած ուրիշ ընտիր գրքեր կան, որ ձեր գրագարանին մէջ չեն տեսնիր, ըսի հետաքրքրութեամբ :

— Է՛հ, փոխանակ թարգմանիչները քաջալերելով որ ընդհանրապէս եւրոպական անհամ, անճարակ և մեր բարքերուն ու սովորութեանց անյարմար վէպեր կը թարգմանեն, աւելի լաւ չէ՞ որ հայ հեղինակներու գործերը զնահատուին և քաջալերուին, աւելի լաւ ու աւելի կատարելագործեալը արտագրելու համար : Ի՞նչ օգուտ կրնան ընծայել մեր ազգին, կը հարցնեմ, այն անճուռի նոր թարգմանութիւնները, որոնց մէջ հայ միտքը կը աննէ օտարին կեանքը, վարքն ու բարքը, և իրեն բոլորովին անճանօթ սովորութիւնները. ահա այս համոզմամբ թարգմանած երկու երեք գրքէ զատ ուրիշ գրքերու ստակ մը չեմ տւած, և ուրիշներու ալ այսպէս կը խրատեմ :

հինգ փարայ չարժող հայ հեղինակութեան մը հինգ զրուշ կը վճարեմ:

— Արգարե ծափահարելի է ձեր այդ սկզբունքը:

— Պէտք է որ ամեն ընթերցասէր հայ այսպէս մտածէ, մեր գրականութիւնը միջազգային եղաւ, ազգային տիպը կորուսեցաւ և զայն լեցուցին անբարոյական, տուփալից և անօգուտ թարգմանութիւններով. պէտք է քաջալերելն հայ վիպագիրները ու բանաստեղծները, որ իրենց մասնագիտութիւնները խնամով մշակելով արժէքաւոր և կարևոր երկերու ծնունդ տան: Ես ազապայի վրայ մեծ յոյս ունիմ, պիտի գոյ օր մը որ առաջնակարգ վիպասաններ պիտի ունենանք, որ պիտի պատկերեն մեզ հայութեան անցեալ ու ներկայ կեանքը, յատկութիւնները և լաւ կամ գէշ սովորութիւնները: Ժողովուրդը այսօր միթէ չը լավէր Ռաֆֆիի, Պերճ Պրօշեանցիի, Քամառ-Քաթիպայի, Ծերենցիի, Նալպանտեանցիի, Շահազիզեանցիի, և ուրիշներուն գրածքները, թրքահայերուն մէջ Մամուրեանի, Փափագեանի, Պէրպէրեանի, Զոհրապի, Պէշիկթաշեանի, Նար-Պէյի, Գրիգոր Օտեանի, Հայկունիի, Տէմիրճիպաշեանի, Թէրզեանի, Փանոսեանի, Գուրեանի և այլոց երկերը:

— Ձեր թւած անձնաւորութիւնները և ուրիշներ կ'ազդեցանեն թէ եթէ ըստ արժանւոյն քաջալերելն, կարող պիտի ըլլան գլուխ գործոցներու ծնունդ տալ, սակայն դժբաղդաբար ընթերցասէր հասարակութիւնը անոնց երկերու հետ այն աստիճան անգթութեամբ կը վարուի, որ գրավաճառներու խանութներուն մէջ փոշիի տակ կը ծածկւին և մուկերու ճարակ կը գառնան, չեմ յիշեր թէ այդ երկա-

սիրութեանց մէջ երկրորդ տպագրութեան տրամադրածներ կը գտնուին... Թշուառներու և թաշխառական Հրեայի նման ճի քանի թարգմանութիւններ առնեցան միայն այդ բողոքը:

— Միւսները Պիտգիւնեան լրագրողով պէտք է փնտռել:

— Ինչպէս լաիք, քանի տղայային և լաւ զտտախարակութիւնը ծաւալի մեր մէջ, այդ պակասն ալ պիտի լեցւի:

Յերեկեան նախաճաշը ըրինք, մնացած ստորագրածամանակը ընթերցանութեամբ անցնել է վերջը երեկոյեան դէմ ելանք պարտէզները պտոյտի: Գիւղին մեծ աղբիւրին մօտեցած էինք, ջրով լի կուժը սարհաւառի դեղանի կիներէն մին ձեզ պատահեցաւ, երբ դէմ առ դէմ եկանք, կիներ շիթակցու և սուրբին սկտան դողալ: Յանկարծ կուժը տաէն ընկաւ և կատրեցաւ, ապեցաւ խեղճ կիներ և կտրմիք աչտեքը դունտթափեցան: Բայց հակաստի այդ գէպրին, խպտագին էր գէճըրը, աչքերը խանարհեցնելով խայտաւ մեր առջևէն:

Այս միջոցին Պ. Յակոբի դէճըն ու այլոց կրպակեցաւ, վարդան էֆ. ուշադրութիւնս հրաւիրեց:

— Ի՞նչ տարօրինակ փոխխտութիւն էր որ եղաւ ձեր և այդ կիսով մէջ, հարցուցի:

Պ. Յակոբ կ'մկմաց:

— Պ. Յակոբի սիրոյ ներկայացուցիչը և պիտի ինի, կ'ըսէի մտովին, ներքին զգացումս ինձ այսպէս կը խօսեր:

— Կարծեմ ձեր...:

Խօսքը բերանս թողուց և ձեռքս կամուց մը կեղմելով ըսաւ:

— Վերջը...:

Դիպեաձնները Պ. Յակոբի սիրոյ գաղտնիքը մասամբ մեզ յայտնեցին, մնացածը ի՞նչ պարագայի և ի՞նչ համոզման առկ սիրահարած ըլլալը գիտնալէ եր, այս ալ, ինչպէս ըստ, վերջը կ'իմանանք:

Այս միջոգէսը վազելով, անցանք աղբիւրին ձորէն, որուն շուրջը գիւղացի կիներ և հարսեր թաղերով լաթ կը լայցին և մէկ մասն ալ բոլորովին մերկանդամ կը լողային:

— Չեր կիները դոնէ տու հարկատու թիւն ի՞նչու չեն ծածկել ըսի:

— **Հարցար անդամ խոտած եմ ոչ միայն երեւցայլի ալ յարերնուն ալ:**

— Ո՞րչափ անբարոյական սովորութիւն, տես սո մերկանդամ հարսը, իր գէմը ձեռքերուն մէջ կը ծածկէ, կարծես թէ մեր աչքերը կը փակէ...:

— Դուք անշուշտ ձեր պտտած շատ տեղերը այ գէջ սովորութեան պատահած էք, շատ տեղեր, նոյ իսկ քաղաքին կիները բոլորովին մերկ եփրատի մ կը լողնան:

— Այո՛, ատոնք քիչ մը աւելի կը չափազանցեն, գիտովալէ վերջը կը մտնեն եփրատ, սակայ եփրատ երեւց հոգւոյն աղանդութիւնները չը կրնա մաքրել...:

— Պատճառը անշուշտ ուսումնասիրած էք:

— Այո՛, կը թու թեան պակասութիւնը և երկը գերբը:

— Կը թու թեան պակասութիւնը կը հասկնա տակայն երկըին գերբը ի՞նչ կապ ունի անբարոյակ նութեան հետ:

— Այո՛, պատճառներէն մէկն ալ այդ է, տար կիլիմաներու բնակիչներու տափախան և հեշտասիրական ցանկութիւնը կը գրգռէ. նոյնպէս տակ կը իմայի օգին աղբիցութիւնը մեղմելու համար աղելից ընպէ լի գործածելու անհրաժեշտ այլ անբնական պէտքը կզգան և ատը համար է որ թալախ բնակիչներ՝ այր և կին՝ օղին չափազանց կը խմեն, այս սովորութիւն Տիգրանակերտի հայ և թուրք կիներու մէջ ևս կոյ, սղին հակառակտական յատկութիւն ունի անոնց համար:

Այս խօսակցութիւններով հասանք Պ. Յակոբի պարտեզը, նստանք հեղատահ առուններու եզերքը կանանց խոտերու վրայ, քիչ յետոյ Արփաճեանն ալ եկա:

— **Դուն հիւրերուդ ա՛յսպէս կը նայիս, ըստ վարդան էֆ. կատակարար:**

— Եղբայր, մի քանի շեղձ կար, դիւղացիք տոնի տեցին որ անպատճառ չափեմ, որով երկար ժամանակ զբաղեցայ, կը ներէք, ըստ Արփաճեան և յորեց:

— Թղին ո՞ւր է:

— Դեռ օղիին ժամանակը չէ, ըստ Պ. Յակոբ:

— Թղի չեղած տեղը ես չեմ կենար, ըստ Արփաճեան տարի ելնելով:

— Նստեցէ՛ք անհամբեր, հարկաւ քեզի մտածած երք, ըստ Պ. Յակոբ:

— Մինակ ե՛ս պիտի խմեմ, որ այդպէս կ'ըսէք:

— Մեր խմածը ի՞նչ պիտի ըլլայ, շատ շատ չորս դատթ:

— Բերէք, աղբար, բերէք ես կը խմեմ:

Դաշտային սեղանը պատրաստեցաւ, շաթակահար կիւրճեանը կրկին մեզ ընկերացաւ, մեր ուրախութիւնը ժամը մինչև հինգ տեց:

Հետևեալ օր վարդան էֆ. քաղաք պիտի խնէր, ուղեցիրք միտտեղ մին և վանք ընկերանալ և զայն ճամբայ դնելէ վերջը մտալ վանքը: Համաձայնեցանք այս մասին և առաւօտ վանք երթալու երազով սնկողին մնանք:

Ե.

Մեր գիտաւորութիւնն ի դորձ դրինք միւս օր: Օգը նպատաւոր էր. ուստի ճամբայ ելանք գէպ ի վանք:

Արդարև քաղցր է այս Մենաստանի տեսքը. ներական են իր ծոցի գերեզմանները, պատերուն ու քարերուն մէջէն երէկեան բուրմունքի նման ուխտաւորը կը հստատէ անուարոյր խունկը սրբակրօն և պերճիմաստ մեր նախահայրերուն. մեր երկրորդ լուսաւորիչը՝ հանձարեղ Սուրբն Մեսրոպ՝ իր մենաստանէն ելնելով անշուշտ երբեմն կայցելէր այս սուրբ աղօթատեղին, իր հետքերը կարծես չեն անյայտացած, իր արցունքները դեռ չեն ցամքած խորանին առջև:

Ճամանակի անխառն ճիրանը, մանաւանդ անզգայ հայեր կողոպտած ու անչքացուցած են անկա: Եւ եթէ երբեք հաստատուն չըլլար այդ վանքին բարոյական հիմերը, անշուշտ ուրիշ ուխտատեղիներու նման փլատակաց կոյտ մը պիտի գտնար: Արդէն սկսած են քայքայել երգիքները, շինող ձեռք մը չկայ որ հոգ տանի: Անխիղճ տնտեսներ յանուն վանքին բարեպաշտ ժողովրդի ծոցէն հարիւրաւոր ոսկիներ քաշած և դրած են իրենց անկուշտ գրպանները. անդին հին ձեռագիրներ մասնաւորներու տները կը շրջին,

ինչպէս նաև տալած թանկագին գրքեր: Սուրբին անունով գրոշմած և բարեպաշտ անձերու կողմէ ներշնչուած զանազան անօթներ գիւղացիներուն տնական պիտոյքին կը ծառային այսօր: Ո՛հ, քանինքու պատահեցայ ու սիրոս յուզեցաւ:

Ո՛ւր են վանքին հազարաւոր ոչխարներն ու եղնեւը, ի՞նչ եղան արդիւնաբեր արտերն ու պարտէզները, որոնց շնորհիւ հազարաւոր ուխտաւորներ կը կերակրէին, լայն ու երկայն ցնցուղներու մէջէն կաթը ագբիւրի նման կը հոսէր: Բայց թէև անշուք, դարձեալ կանգուն կը մնայ այդ ուխտատեղին ու պիտի մնայ երկար դարեր: Իր քաղցր հայեացքին կ'զմայլլին քիչրտերն իսկ և երկիւղածութեամբ կը մօտենան անոր սեմին:

Նոյն վայրկենին ծունր իջայ սուրբ սեղանին առջև, արտասուելով աղօթեցի... և յետոյ վանահօր սենեակը ելանք որ առաջնորդ էր միանգամայն Բալուի: Այստեղ աւելորդ կը համարիմ խօսիլ անոր վրայ... որովհետև Գեր. Սրուանձտեանց Գարեգին եպիսկոպոս անիկա տեսած է Տիվրիկի Ս. Լուսաւորիչ վանքը և Թորոս Աղբարի մէջ նկարագրած. բան մը ըսած ըլլալու համար միայն կը հաստատեմ Թորոս Աղբարի մէջ գրածները:

Վանահայրն երբ մեզ տեսաւ ուրախացաւ, չը գիտեմ թէ ներքին երեսը ի՞նչ գոյն առաւ, բայց մեզ ինչ փոյթ մարդուս ներքինը, միթէ՞ մեր բոլոր համոզումները չեն կազմած արտաքին երևոյթի վրայ, ներքինը միայն Ստաւրած գիտէ:

Վարդան էֆ. սուրճ խմելէ վերջը մեկնեցաւ կիրակի օր Մաքրաք գիւղը միանալու պայմանաւ,

որովհետև ֆարբերդի քաղաքական ժողովոյ ատենապետ և մեզ բարեկամ փաստաբան Մխաբեան Պօղոս էֆ. իր սեփական հողերուն համար այդ գիւղը եկած էր և որուն տեսութեան պիտի երթայինք:

Օղիի շիշը մէջ տեղ եկաւ. ընթերցողը կը տեսնէ թէ ուր որ կ'երթանք, օղին մեր անբաժան ընկերն է: Օղի խմելու սովորութիւնը Բալուի համար երկրորդ ընտրութիւն դարձած է. մի քանի գաւաթներ խմելէ վերջը նստանք սեղան. լեցած ու խորոված գառ մը պատրաստել տւած էր վանահայրը: Հայաստանի մէջ այս գառի սովորութիւնը ընդհանրացած է. պատիւ մը ընելու համար անմիջապէս գառ մը կը մտնեն: Մեծ ախորժով ճաշեցինք, մաքուր օղը, պաղուկ ջուրը ախորժակնիս բացին և մանաւանդ անապակ գինին մարտդութեան նպատեց:

Ժամը տասնեմէկին հեծանք ձիերը և կէս ժամէն մտանք գիւղ:

Պ. Յակոբ միշտ կ'աճապարէր որչափ կտրելի էր կանուխ իջնել գիւղ, սակայն Արփաճեան խորամանկի կութեամբ մին և ժամը տասնեմէկ նստիլ հարկադրեց:

Եթէ ընթերցողները կը ներեն, քիչ մըն ալ մենք աճապարենք:

Կիրակի առաւօտը լուոցաւ, ես միայնակ ձի քշեցի գէպի Մաքրաք, կէս ժամէն հասայ գիւղ. քահանայի տունը հարցնելով գտայ, ուր իջած էր Մխաբեան Պօղոս էֆէնտի:

Վէպիս անձնատուութիւնները նկարագրել զանց ըրած եմ համառօտութեան պատճառաւ, և արդէն պատմւած իրողութիւններէն կիմացւի թէ ինչ ընաւորութեան տէր մարդիկ են:

Վարդան էֆ. զիս կանխած էր:

Պօղոս էֆէնտիի բարի գալուստ մաղթելէ յետոյ, խօսակցեցանք ֆարբերդի և Բալուի լուրերու վրայ: Քսան օրի չափ պիտի մնար, ուրախացանք. մեր բարեկամական շրջանակին վրայ գէթ քսան օր սիրելի բարեկամ մ'ըն ալ պիտի աւելնար: Պատական ձմեռակը մեր պապակը անցուց, ամուսն ճամբորդութեան մէջ եթէ անտանելի բան մը կայ, այն ալ ծարաւն է, մէկ կողմէ օղին տաքը, միւս կողմէ կըլլած փոշին կը խեղդեն մարդս: Պօղոս էֆ. փափաք յայտնեց Բալուի անւանի Ս. Մեսրոպայ քերդը այցելել, խօսապահք յաջորդ կիրակի միաթին այցելել: — Ուրախ կ'ըլլանք, գիշերն ալ մեզ մօտ կը մնաք, մասնաւորապէս կը հրաւիրեմ ձեզ, ըսաւ Վարդան էֆէնտի:

— Ասիկայ իմ գործիս չը գար, ես այդ անիծեալ քաղաքը ոտք կոխել չեմ ուզեր. մի քանի անգամ այս գիւղը եկած եմ, բայց միայն ցերեկ մը իմ նպատակս բերդը սրտակէ վերջը վերադառնալ է, ըսաւ Պօղոս էֆէնտի:

— Բայց անշուշտ մեր բարեկամական սիրոյն համար կը զոհեք ձեր այդ գիտատուութիւնը, ըսի:

— Շնորհակալ եմ, ձեր հրաւերը չընդունիլ չէ ինքս, այդ ուրախութիւնը հոս ընենք չըլլաւ:

— Այս տեղ ալ կ'ընենք, բայց մերը միշտ մերը կրնայ ըլլալ:

— Ինչ որ է, գալ կիրակի կը տեսնուինք: Այդ կիրակին, առաւօտ, արշալոյսը դեռ չը ծագած, սկսանք մեր արշաւանքը, խիստ գժւարանց ճապարհներէ ելնելով Ս. Մեսրոպայ բերդը:



Սուրբ Մեսրոպայ ահագին ապառաժուտ բերգը, ինչպէս յիշեցինք, կը բարձրանայ Բալուի հիւսիսային կողքին վրայ. ուրի խիտ գծաւորին եւքի ճանապարհ մը արեւմտեան կողմէն միայն, ուրկէ առանց ա՛հ ու զողի անցնիլ չէ կարելի: Վերջապէս վախով ու ստուգումով հասածք երկու մէթր՝ բարձրութիւնն և մէկ մէթր լայնութիւնն ունեցող կանգեալ վէմի մը առջև, որուն երեսը ամբողջ սեպագրերով ծածկեած էր: Սոյն սեպագրերը եթէ օր մը կարդային, բերդի վրայ պատմեամ առասպելախառն պատմութիւնները պիտի ստուգւին և ո՛ր գիտէ մեր ազգային պատմութեան մէջ ի՛նչ յեղաըջումներ պիտի ներմուծեն: Չը կրնար կարդալու սրտնեղութեամբ շարունակեցինք մեր խուզարկութիւնները, զայն ընդօրինակելէս մեզ անկարելի էր, վասն զի անցեալ երկար դարերու շրջամէն մեծ մասամբ մաշած էին, մասնագետի մը դործ դարձած էր զայն ընդօրինակելը:

Թողինք վէմը, խիտ նեղ և շեղ անցքէ մը անցնելով մօտեցանք քարափոր դռան մը, այս դռնէն երբ ներս մտանք բաւական մեծկակ սրահի մը մէջ գլուխեցանք, որուն հարաւային և արեւմտեան կողմերը կրկնակի դռներ կային, այս դռներէ ներս մտանք, բաւական կանոնաւոր փորեած սենեակներ էին: այս փորեածքներ ահագին բիրտ ժայռի մը մէջ մարդկային ձեռքեր բացած էին, զարմանալի կանոնաւորութեամբ:

Մեր առաջնորդը Բալուի բնիկ ինքնավարժ բժիշկ Լէպլէպիձեան էրս մեզ պատմեց թէ ժողու-

վրդական աւանդութեան համեմատ այս սենեակները Սուրբ Մեսրոպայ գլորցըր եղած են, ուր կ'ուսուցանէր հայկական նորագիւտ տաւերը և ուր զտած էր զանոնք, ըստ Սյամաւուրքի, Չաւնեան Պատմաբանն և ըստ Երեմիա Սրբագանի:

Այս շէքերէ զատ տեսածք ուրիշ քարափոր սենեակներ, ուր հաստատեամ է Սուրբ Մեսրոպի աղօթատեղին. մատուան պատերն ամբողջ մամի մուխեղով սեցած էին, մեզ առաջնորդողը պատմեց թէ ամեն տարի Ս. Սահակայ և Մեսրոպայ տօնի օրը քահանայ մը կը պատարայէ այնտեղ և ժողովուրդը մատուղիլը մատուցանէ:

— Բայց մտառուր պատարայի սեղան չունի, հարցուց Պօղոս Էփէնտի:

— Թէև հայերը մի քանի թնդաւ շինեցին, սակայն քիւրտերը քանդեցին:

Աղօթեցինք Չերմեանդութեամբ և սրտաբոյլ դուրս ելանք:

Բերդին այլ և այլ կազմերը շրջեցանք, աղիւստ չէն և կամարածե մեծ ջրամբար մը տեսանք, ինչպէս նաև փլատակ շէքեր, որոնց մեծ մասը հայտնաւոր լինելը մեզ խօսեց առաջնորդողը: Կար նաև գետնափոր ճանապարհի մը մտիթ անցքը օր մինչև Եփրատի գետտօր կը հասնի կ'ըսեն:

Արեւ սկսած էր բարձրանալ, տարի չը մնալու համար սկսանք աճապարել:

Ես ուրիշ մտառանջութիւն չունէի, բայց եթէ Պ. Յակոբի սիրոյ գազանկքին տեղեակ ըլլալ:

Անհամբեր ըլլալով մի օր առանձին ձի հեծայ և ուղղակի Պ. Յակոբի տունը իջայ. իմ այսույցեւորութիւն զինքը չտիրազանց ուրախացուց:

— Ես աւրախ եղայ որ մեր ասունն իջար զիս անհասնս զոն ըրէք, բաւ :

Գ. Յակոբ անհանգիստ էր, կեզէք բանալ իր սիրտը վատահելի բարեկամի մը, ասոր մէջ կը կարծէր գտնել իր մխիթարութիւնը. Լեցուն սիրա մը կը փախարքի միշտ ուրիշ մը իրեն հաղորդակից ընել, մարդս մեծ բեռ մը նետած կ'ըլլայ իր վրայէն, երբ գազանէք մը ուրի ին կը հաղորդէ:

Ես որչափ նկատեցի, իր կնոջ՝ Իսկուսիի սիրտն ալ յուզեց էր. նէ ալ սրտի գազանէք մը ունէք սրուն խստովանութեան անբխմաբեւելի աննշը իր գէնքին վրայ կը կարգացէր. ինձ հետ խիստ մտերմ մօրէն վարեցաւ, իր խօսքերը այնպիսի անկեղծ շեշտեր ունէին որ մարդս ակամայ կը համակրէր անոր:

— Իմ այցելութեանս գլխաւոր նպատակը անշուշտ հասկցար, ըսի Յակոբին:

— Այո՛, ըսաւ, ես ալ այդ ուրախաութիթ տեսակցութեան կը փախարքէի:

— Ուրեմն աւնոր վրայ պիտի՛ խօսիս:

— Անշուշտ, սրտակից բարեկամի մը կը կարօտէի սրուն բանայի սիրտս. Արիաճեան արտաքին երեւոյթներով կը գատէ զիս, սրով կը մեղանշէ, վանգի ինչպէս որ պիտի պատմեմ, իմ սէրս բոլորովին տըզայական է, եթէ ներելի է այսպէս ըսել, բոլորովին անմեղ համակրութիւն մը առ նե. երթմաք մեր պարտէզը, օգը այսօր տաք կ'ընէ:

Փոքրիկ շիշ մը օդի և քիչ մը ակզի առնելով գնացինք նստիլ այն ջրին եզերքը, ուր խմբւած էինք անցեալ շաբթու: Մի բանի գաւաթներ կօնծելէ յետոյ այսպէս սկսաւ խօսիլ, պատմութեան կանխաբանը հառաչով մը սկսելով:

— « Ինչ որ հիմայ ձեզի պիտի խօսիմ գազանէք մը չէ, որովհետեւ Ժողովուրդը ամբողջ և նոյն ինչ կ'ինս գիտէ, բայց ինչպէս ըսի, շատեր միայն արտաքին երեւոյթէն կը դատեն զիս: Գեռ չամուսնացած սիրահարած էի անոր՝ Մարգրիտին, բայց յայտ տուազաս անոր վրայ չինած էի. նէ ալ ինձ փոխադարձ կը սիրէր, ինչպէս ցարդ: Մեր սրտերը հապտակի դիւզի սովորութեան իրարու բացած էինք. գիւզին մէջ ոչ ոք գիտէր մեր սիրահարութիւնը, միայն մօրս բացած էի սիրտս, որովհետեւ այսպիսի պարագաներու մէջ միայն մօր մը սրտին կրնայի վրաս տահել, զի մայրական սէրը անտահման է:

« Մայրս համեզեցի սր ինքնաբերաբար հօրս խօսի զիս անոր հետ նշանելու համար, մայրս իրրի իր կողմէ յղացած խորհուրդ մը պիտի ներկայացնէր հօրս. սիրահարութիւնը հօրս համար անբարոյական նստութիւն էր:

« Մօրս ստիպումներուն վրայ հայրս յօժարեցաւ. երբ հօրս հօճութեան լուրը տուի տարախութեանս պիտի խեղդեցայի, չը կրցի համբերել, անմիջապէս անոր ալ հաղորդեցի այս յաջողութիւնս:

« Ախ... այստեղ օդի մը պիտի առնեմ, տազայի երեւակայութիւններս կ'իրականանային:

Լեցուն գաւաթ մը օդի ըմպելէ վերջը շարունակեց:

« Այնիւ բարեկամ, պիտի ներես ինձ անշուշտ երբ արտասուել ուզեմ:

Այս ըսաւ և սկսաւ արտասուել, մխիթարել ջանացի զինքը բայց ի գուր:

« Մի՛ ճզնիր արցունքներս ցամքեցնել, բարե-

կամ, ասոնք իմ թանկագին սխալաբանքս են, թա՛ղ որ աստատուէն հասի՛ն, երբ արտասուեմ նեղ սիրտս կ'ընդլայնի և կարծես անոր վրայէն ծանր բեռ մը կը վերնայ:

« Երբ նշանեցայ, իրեն հետ տեսակցելու միջոցներս ա՛լ պակեցայ, վասն զի չը նշանուած ազատ էի անոր հետ խօսիլ, բայց նշանելէ վերջը անկարելի և միանգամայն պախտարակելի էր ըստ աւանդական սովորութեան. մինչև իսկ անոր ասն առջևէն անցնիլ ներելի չէր: Այս թշուառական սովորութիւնը զիս չափազանց կը տանջէր, տեսակցելու փախաբանողութեամբ էր. մի քանի օր կրցի համբերել, սակայն գիշերները անքուն կ'անցնէի, երթալով կը տկարանայի. մայրս նկատեց այս և ըսաւ.— Ի՞նչ ունիս զաւակս, դուն հիմայ աւելի ուրախ և աւուրջ ըլլալու ես.— Մօրս այս հարցման լուծեամբ պատասխանեցի. ի՞նչ ըսէի, փախաբան համեմատ նշանուած էի, ալ ի՞նչ կուզէի . . . ա՛հ, կուզէի տեսակցիլ անոր հետ:

« Վերջապէս գտայ գաղտնապահ կին մը, որուն նամակները ես կը կարդայի և կը գրէի և որուն բացի սիրտս: Հաճեցաւ զայն իր տունը բերել, երբեմն տեսակցելու համար. ուրախութիւնս չափ ու սահման չունէր. նոյն օրը կատարեցի փախաբան նշանածս պտուռ մաւնային տունը բերել տալով: Ամբուան մէջ երեք չորս անգամ տեսակցիցայ հետը. զարմանալի փոփոխութիւն մը կրեց հոգիս, զարթ էի, գոհ էի: Մայրս տարօրինակ կը գտնէր իմ այս փոփոխութիւնը. մէկ ամուսն կարճ միջոցի մէջ այնքան նիհարեալ և այնքան ալ յետոյ գիւրեալ . . . իրօք զարմանալի էր այս:

« Նշանուածներէս երեք ամիս անցած էր: Հօրս վրայ ուրիշ փոփոխութիւն մը կը տեսնէի: Իմ հետ խիստ ցասկոտ ու խոժոռ կերպով կը վարէր: Այս երևոյթ անտեղի կը թուէր ինձ, ինչպէս նաև մօրս: Հօրս այս ընթացքին պատճառը զժբաղդ պարագայի մը ներքև իմացանք:

« Գիշեր մը յանկարծ քունէս արթնցուցին. քահանան եկաւ զիս խոստովանելու, պատճառը յայտնեց, պիտի պսակէր զիս նոյն գիշերը: Բայց ո՞րու հետ, և ի՞նչու զաղտագողի . . . : Քահանային հարցուցի, խեղճ քահանան տխուր կերպով ըսաւ.— Հօրդ կամքն է, այս գիշեր Իսկուհիի հետ պիտի պսակուի. ի՞նչ կ'ըսե՛ս, հաւանութիւն կը տա՞ն թէ ոչ: — Այս շանթահարիչ լուրը մտածելու կարողութիւն չը ձգեց վրաս: — Մարդրիտը ի՞նչ նշանածս էր, այս ի՞նչ տեսակ փոփոխութիւն է. ըսի արտասուելով: — Տղաս, ըսաւ քահանան լրջօրէն, այս փոփոխութիւն քու ձեռքով եղած է, հայրդ քեզ մաւնային տունը տեսած է Մարդրիտին հետ: Այս տեսակցութիւնը պատահականութեան վերագրելով սկսած է թագուն կերպով քայլերուդ հետեիլ: Առաջի օր գարձեալ նոյն վիճակի մէջ գտեր է քեզ, զիս եկաւ գտաւ և ամեն ինչ պատմեց զայրացեալ, թէև համոզել ջանացի զինքը թէ՛ ետ կենայ իր այս խորհրդէն, սակայն անդրդուելի մնաց: Ես ալ իրբև քահանայ եկայ պարտքս կատարել, խոստովանէ՛ գաւակս, այս գիշեր Իսկուհիի հետ պիտի ամուսնանաս, պիտի հաւանի՞ս թէ ոչ:»

« Բերանս չէր բացէր. քահանան չորրորդեց իր հարցումը, միավանկ բառ մը այս կամ ոչ պիտի ըսէի, բայց քանի՛ զժլարին էր ինձ համար . . . եթէ ժրս.

տական լինէր պատասխանս, գիտէի թէ հայրս բռնի պահելէ պիտի տար: Ի՞նչ, դաւաճներու մէջ ո՞ր տղու բերնի բանն է հօրը կամքին դէմ կենալ . . . :

Վերջապէս, յորդահոս արտաստօքներուս և հեկեկանքիս խառնեցաւ խուլ այո՛ մը, անգիտակցաբար արտաստնած էի այդ բառը:

«Քահանան քթին տակէն սկսաւ մոմուտը ողորմեսցի . . . յանկարծ ուշաբերեցայ. սակայն, աւա՛ղ, անիծեալ բառը արտաստնած էի:

«Գլխիկոր՝ սրտաթախիծ պսակին տակ գժւարաւ կեցայ. ոտներս կը դողային, կիքահայրը սուրը էր պատեանէն հանած գլխուս վերեւ գրած էր, ինչպէս նաև պատեանը իսկուհիի գլխուն, այնպէս որ իրար խաչաձև կը կտրէին . . . : Այս սովորութեան մէջ կընքահայրս կարծես ինձ իբրև դահիճ կը ներկայանար . . . : Պսակի խորհրդի տակ ուշաթափ կը մնայի, առանց լսելու կատարած խորհուրդները: Երբ քահանայի նետած յորիններէն մէկ քանին ելաւ երեսին դպիլէ յանկարծ սթափեցայ . . . ո՞հ, ամեն ինչ լրացած էր, փոխան Մարգրիտի այլևս իմ անբաժան ընկերս էր իսկուհին:

Օղի մըն ալ կօնծեց և հառաչանօք շարունակեց:

«Մարգրիտ իմ պսակուէէս երկու օր վերջը եղելութիւնը իմանալով անկողին ինկաւ: Խեղճ ազնիկը չորս ամիս շարունակ հիւանդութեան տագնապը կրեց: Պարկի մէջ գրած ոսկրի կտոր մըն էր դարձած. քիչ շատ բժշկութենէ հասկցող ծեր կիներ անոր մահը անխուսափելի նկատած էին . . . : Իմ առողջութիւնս բարեբաղդաբար չը վտանգեցաւ, կարծես նախախնամութիւնը զիս անոր համար պահեց :

« Իր վերակենդանութեան համար գաղափար մը ծնաւ մտքիս մէջ, այն է միսթարական և յուսատու թղթակցութիւն մը սկսիլ անոր հետ: Հինգ վեց նամակներէ վերջը սկսաւ տակաւ առ տակաւ կազդուրիլ և չորրորդ ամիսը բոլորովին ապաքինեալ անկողինը թողուց:

«Մարգրիտի ծնողքը անոր վերակենդանութեանէն օգուտ քաղելով անմիջապէս ամուսնացուցին, յուսալով որ այդ է իր հիւանդութեան պատճառը, սակայն այդ միջոցը որչափ ես գիտէի, չէր կարող անոր սրտի վէճքերը բուժել:

«Սակայն զորմանալին այն է, որ ամուսնութեանէն վերջը ա՛լ աւելի սկսաւ առողջանալ և գեղեցկանալ:

»Մեր բաժանումէն վերջը՝ տակաւին իրարու հետ խօսք-մը փոխանակած չէնք, միայն զիրար գիտել, իրարու ճամբայ սպասել, ահա այս է մեր հիմախան յարաբերութիւնը՝ որ սմանք ծուռ մտքով կը մեկնեն և անստեղծ պատմութիւններ կը հնարեն:

«Ստոյգը, իրականը սա է որ իսկուհին կը սիրեմ իբրև իմ կինս, և Մարգրիտը կը պաշտեմ իբրև սիրուհիս . . . իմ այս սէր, ինչպէս ըսի, բոլորովին արդար յական է, սակայն մտքէս ու սրտէս հեռացնել ձեռքս չէ: Այս է պատճառն որ օտար քաղաքներու մէջ ուսուցչութեան պաշտօն առնելով տարւայ մէջտասը տարի միտք բացակայ կը դառնիմ գիւղէն. բայց երբ երկու ամիս արձակուրդի պատճառաւ հաւաք գամ, դարձեալ կը դառնամ իմ պղատնական սէրիս:»

Տխուր հառաչով մը Պ. Յակոբ աւարտեց իր պատմութիւնը և իմ հետաքրքրութիւնս գոհ եղաւ:

— Ձեր սէրը, եթէ անմեղ է, ինչպէս որ կը հաւատամ, ըսի, պարզօրէն յիշատակ մըն է, և այդպիսի յիշատակներ շատ մարդ ունեցած է: Միայն զաւակներուդ սիրոյն մէջ պարտին թաղել յիշատակներ, որ կրնան բանահիւսի մը երեակայութիւնը բորբոքել, այլ երբեք հօր մը սիրան ու պարտաւորութիւնը վրդովել...:

— Իրաւունք ունիք, ըսաւ Պ. Յակոբ ժպտելով, և իրարմէ բաժնեցանք:



ՎԵՐՁ

«Արևելեան Մանուշ»

1890

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՈՒՐԻՇ ԵՐԿԵՐԸ

- 1.— ՄԱՐԻՆԱՐ ԹԷ ՀԱՅԿԱՆՈՒՇ (վէպ, սպառած), Կ. Պոլիս, 1889:
- 2.— ՓՈՒՆՁ ԳԻՏԱԿԱՆ (քում, երազ, կայլը) Կ. Պոլիս, 1891, Գիմ 1 Ֆրանկ:
- 3.— ԱՂԶԱՆ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԱՆՐԱՆԸ (վէպ) Կ. Պոլիս, 1895, Գիմ 1 Ֆրանկ:
- 4.— ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՇՆԱՄԻՆ (հակալիդիակն, սպառած), Ջսիւռնիա, 1901:
- 5.— ԵՐԵՄՅԱՆԵՐԻ ՍԵՈՒՆԴԸ (ծննդից, վիճչ 15 տարեկան, հասակը, սպառած), Ալէքսանդրապոլ, 1903:
- 6.— ՈՐՐՏԵՂ Է ԱԶՆՈՒԹԻՒՆԸ (Աղէքսանդրիոյ Սահմանադրական Պայքարը և Վերակազմակերպը), Աղէքսանդրիա, 1905, Գիմ 50 Սանթիմ:
- 7.— ԸՆԴԱՐՁԱԿ ԴՊՐՈՑՅԵՄՆ ՆՈՒՂԱՊԱՏՈՒԹԻՒՆ (120 պատկերով, էջ 679), Աղէքսանդրիա, 1906, Գիմ 15 Ֆրանկ:

ՎԻՊԱԿԱՆ ՀԱՌԱՔԱՇՈՅ

- 8.— I. ՄԻՇԷԼ ԵՒ ԶԸՆԻՉԻՆ: II. ԱՌԻՍՏԵՆԿԱՐԸ (վիպակներ մէկ գրքովի մէջ), Աղէքսանդրիա, 1906, Գիմ 25 Սանթիմ:
- 9.— III. ԺԱԿԱՏԱԿԻՐ, Աղէքսանդրիա, 1906, Գիմ 25 Սանթիմ:
- 10.— IV. ՎԱՐԺԵՊԵՏԻՆ ՊՂԱՏՈՆԱԿԱՆ ՍԷՐԸ, Աղէքսանդրիա, 1906, Գիմ 25 Սանթիմ:

ԵՒ ՊԻՏԻ ԼՈՅՍ ՏԵՍՆԵՆ

- V. ՎԱՌԾ:
- VI. ԱՏՐԻՆԷ:
- VII. ՍԻՐՈՅ ԶՈՏԵՐԸ:
- VIII. ՄՈՒՈՒԹԵԱՆ ԶՈՏԸ:
- IX. ՄԵԼՔՈՆ ԶԷՏԵԱ:

«Ազգային գրադարան»



NL0369916

ԾԱՆՍՈՐՈՒԹԻՒՆ

Չանագան ժամանակներու և զանագան թերթերու մէջ լոյս տեսած մեր վիպական գրածքները լեզական և այլ թեթև բարեփոխումներով և վիպական հաւարածոյ ընդհանուր վերնագրի տակ հետզհետէ առանձին գրքոյկներով պիտի հրատարակենք, անոնց նախապէս հրատարակած թւականներու կարգովը:

Այս գրքոյկները պիտի վաճառին թիֆլիսի գրավաճառներուն մօտ և հետեւեալ տեղերը՝

Պօսթօճ— Մ. Սատոյեան, 27 Beach st.

Ֆիլիպէ— «Ռազմիկ»ի խմբագրատունը.

Սարմաստ— Ստեփան թաղէոսեան.

Թաւրիզ— Տօքթ. Պ. Ասլանեան.

Եգիպտոս— Մեր մօտ՝

Le Docteur Paschayan-Khan
Alexandrie (Egypte)

Տասը օրինակէն աւելի գնողներուն 100ին 10 զեղջ պիտի ըլլայ, եթէ ուղղակի մեզ դիմեն և փոխարժէքը կանխիկ վճարեն:

ՏՕԲԹ. Կ. ՓԱՇԱՅԵԱՆ

23 Ապրիլ 1906

Աղեքսանդրիա